— Լտնիկն է, էմիկն է:

Շուտասելուկ. — Ծառի ճուտը ճմբան ծէրին՝ ճիտը ծուռ:





45. Էրբ է լինում


Սրկն է այրում,

խոտը չորանում,

չորենը հասնում

հասկերը լցնում:

Սոյդ էրբ է լինում:



46. Նանի հաւերը



— Զո՛ւ, Զո՛ւ, Զո՛ւ, բրնձի,
ով որ չը գայ՝ մէրն ինձի,
տանեմ ծախեմ՝ գինն ինձի:

Էսպէս կանչեց մեծ նանը, կուտը
ցանեց դռանը:

Հաւաքւեցին սև-սևուկներ, սիպ-սիպ-
տակներ, պէծ-պէծիկներ, դեղ-դեղիներ,
պրտ-պրտուրիկ, չըլ-պտուրիկ հաւերը:

Եկաւ և աքաղաղը. հասակը բարձր, վիզը երկար, գլխի թա-
գը կրակի պէծ, փետուրները գոյնզգոյն ու միրուքը կաս-կար-
միր աքաղաղը:

Ու տեսնելով կուտ-կուտիկ՝ հաւ աքաղաղ, ճուտ-ճուտիկ,
վրա հասան ճը՛տ, ճըտ, ճը՛տ, վեր քաղեցին կը՛տ, կը՛տ, կը՛տ...

Հաւերը ի՞նչ օգուտ են տալիս.

Ուրիշ ի՞նչ ընտանի թռչուններ գիտէք:

Ա. ո. ա. ծ. ն. ե. ր. — Գեր հաւը ձու չի ածի:

Ածան հաւը կըչկըչան կը վնի:



47. Մուրթան արշուրը

—Մո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ...

Ես շահ արշուրն եմ,
ես խան արշուրն եմ, սուլթան արշուրն եմ:
Իմ հաւիկներ, ո՛վ է աշխարհի գեղեցիկը,
քաջերի քաջը:

—Ջը կայ, չը կայ, սուլթան ու խան, չը կայ, չը կայ, պայծառ
շահ, էս աշխարհում քեզ հաւասար: Ի՛նչ ես գեղեցիկը, դ՛ու ես
քաջը, — պատասխանում են հաւերը:

—Մո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ...

Արծւի ձէն ո՛վ ունի,
ուժեղ ոտներ ո՛վ ունի:
գոյն-գոյն շորեր ո՛վ ունի:

—Մեր շահի շորերն են գոյն-գոյն, ոտներն են պողպատ ու ձէնն
է գիւ-գիւ:

—Մո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ...

Ո՛ւմ թախտն է բարձր,
ո՛ւմ գլխին թագ կայ,

ո՛վ է ձեր սուլթանը, ո՛վ է ձեր խանը:

—Ի՛նչ թախտն է բարձր, քո գլխին թագ կայ: Ի՛նչ ես մեր սուլ-
թանը, դու ես մեր խանը:

Ի՛նչ... բռնեցին խանին, մորթեցին սուլթանին, փետրեցին
հարան, եփեցին ու կերան:

Ի՛նչ ընտանի թռչուններ գիտէք, արշուրից ուժեղ ի՛նչ թռչուն կայ:

Ա. ա. ծ — Գլուխը գովելով գլորւեց:



48. Ծիպիկ

Կսարիկ-ճարիկ, այ Ծիպիկ,
 Կանի թուլես ծառից-ծառ,
 Գունէ մի քեղ քիչ քիպիկ,
 յոգնած թևիդ հանգիստ արե՞

Ծիպիկն ինչո՞ւ է ծառից ծառ թռչում:



49. Անբան Հուռիկ

Հինում է չի լինում մի կնիկ:
 Էս կնիկը մի աղջիկ է ունենում անուռը Հուռի: Սա լինում է ծոյլ աղջիկ: Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած երգում է.

— Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է.
 բամբակը՝ կորիզոտ է.
 մետաքս պիտի, որ մանեմ,
 մաստակ պիտի, որ ծամեմ,
 կտերը տիտիկ անեմ,
 անցնողին մտիկ անեմ.
 ուտեմ, խմեմ, մթնի, քնեմ:

Հարևանները անուռը դնում են անբան Հուռի:

Ծոյլերի վերջն ի՞նչ է լինում:

Ա. ո. ա. ծ. — Բան դրին փախաւ, հաց դրին հասաւ:

50. Ոչ որ...

— Ո՞վ կայ տանը:

— Ոչ որ... ես եմ, պապս է, տատս է, հէրս է, մէրս է. երկու
 քուրս, երեք ախպէրս, երկու հարսս, հորքուրս ու մօրքուրս.
 Ո՞վ կայ որ...



51. Փիսիկի գանգատը

Փիսիկը նստել
մի մուխ անկիւնում,
ուռքերը կիտել
ու լաց է լինում:
Մօտիկ է գալիս
մի ուրիշ կատու.
— Ինչո՞ւ ես լալիս,
այ փիսիկ ջան, դու...
— Ի՞նչ անեմ հապա,
որ լաց չը լինեմ, —
գանգատ է անում
Փիսօն տըխրադէմ: —
էն Համօն թաքուն
մածունը կերաւ,
գընաց տատի մօտ
ինձ վըրա դրաւ:
Հիմի տատիկի

ետեից ընկած՝
ինձ են ման գալի
մի-մի փէտ առած
էն քոթոթ Սուրէնն,
Անօն ու Մօսօն:
«Ո՛ւր է, — ասում են, —
ո՞ւր է գող Փիսօն,
անի, թէ մի գըտանք,
մածուն ցոյց կը տանք...»
էսպէս բան սարքեց
էն Համօն իմ դէմ.
Ինչ անեմ հապա,
որ լաց չը լինեմ...
Ու Փիսօն նստել
մի մուխ անկիւնում,
ուռքերը կիտել
ու լաց է լինում:

Համ էր արել Համօն, որ մեղադրել
էր փիսօյին:



52. Փեսի բաժինը

Նանը մածուն էր մերել,
բաց պատուհանն էր դրել:
Անտէր մնայ սև կատուն՝
փեսի բաժինն էր կերել:



Ժիժեռնակ, ժիժեռնակ,
 դու գարնանն սիրուն թռչակ,
 դէպի ուր, ինչ ասա,
 թռչում ես այդպէս արագ:

54. Զուխտ ու կէնտ

Մայրիկը ծիրան բաժանեց երեխաներին:

Արմիկ, — ասաւ Սօնիկը, — արի շուխտ ու կէնտ խաղանք
 Տեսնենք ո՞վ կը տանի:

— Էաւ, — համաձայնեց Արմիկը, — առաջ ո՞վ բռնի, ես թէ դու:

— Ես, — ասաւ Սօնիկը, — ես մեծ եմ:

Սօնիկը ձեռքը ետ տարաւ, երկուսն էլ ամուր խփեց և առաջ բերելով հարցրեց.

— Զուխտ է թէ կէնտ:

— Կէնտ, — ասաւ Արմիկը և բռնեց Սօնիկի ձեռքը: — Բայց արատեսնենք կէնտ է թէ շուխտ: Յիշիր այ, ես կէնտ եմ ասել:

Սօնիկը բաց արեց ձեռքը, տեսան որ երեք հատ ծիրան կամէկի մէջ:

— Օ՜՜... կէնտ է, կէնտ, — ուրախացաւ Արմիկը, — տուր ինձ ծիրանները:

— Ոչ, կէնտ չի Արմիկ, — ասաւ Սօնիկը, — այս երեք ծիրանը երեք էլ կորիզ կայ, կանի վեց: Վեցը շուխտ է, դու պէտք տաս ինձ երեք ծիրան:

— Չէ, Սօնիկ, այս երեք ծիրանը երեք կորիզ ունի, որ կանի վեց, բայց երեք կորիզն էլ երեք միջուկ ունի, որ կանի իննը Տես, էլի կէնտ է, դու պէտք է տաս ծիրանները:

Սօնիկը տեսաւ, որ ո՞չ մի կերպ չի կարողանում ազատել Արմիկից, ծիրանները տւեց նրան:

Ռ՞վ էր երկուսից անելի հնարագէտ.

55. Քնած են



—Շուշան, արի թուխար գցենք գոմը ու ճուտերը մէկ-մէկ լողացնենք,—ասաւ քոյրիկը:—Լաւ, արի լողացնենք:

Թուխար մի կերպ գոմը գցեցին, տաշտակը ջրով լցրին, ճուտերը մէկ-մէկ բռնեցին, ջրի մէջ խեղդեցին ու պառկեցրին ջլալի տակ:

Իսկուհի եկան բակը, տեսան մայրիկը հանդիցը գալիս է:

—Մայրիկ ջան, գիտե՞ս ինչ ենք արել, ճուտերը լողացրել ենք, տեղ շինել ու քնացրել, հէնց խելօք քնած են, իսկի լաց չեն լինում,—

ասաւ Շուշանը ու փաթաթեց մօրը:

—Ի՞նչ, ի՞նչ, չը լինի՞ թէ խեղդոտել էք...

—Չէ, չէ, մայրիկ ջան, տես, ջլալի տակ քնած են:

Հմուտ արին նրանք:



56. Մեր վառիկը

—Կը'-կը', կը'-կը', կղաք-կը' կը'-կը'...

Ձուտ էր ածել մեր վառիկը.

ձուտ էր ածել,

հպարտացել,

կըրմըշտուրիկ էն հաւիկը:

Կը'-կը', կը'-կը', կղաք-կան, կղաք-կան...

էս ուր է, ուր, ձուտ էլ չը կայ,

կըրկուում էր,

քըջըջում էր

քըրքըրում էր,

ու կանչում էր.

բնատեղը չալթեիկը...

էս ուր է, ուր իմ ձուտը...

Ինչո՞ւ էր անհանգիստ չալ վառիկը:

Հանելուկ.—էն ի՞նչ տուն է, դրսից արծաթ է, ներսից ոսկի:



Իրէն հետու. քարափին կողորում է անդադար.
 -կղմկ-կմ, կղմկ-կմ: էն կախան է կարդում
 կանաչ թիւերում. -կղմկ-կմ, կղմկ-կմ...

Զրկան ծուլտարը. Ո՛վ քարաւ, ո՛վ կարաւ.. որո-
 նում է և քիտուր կարդում. -կղմկ-կմ, կղմկ-կմ...

Կարան ինչպիսի տեղ է քուն շինում:
 Կարան ինչո՞ւ էր լալիս:



58. Ոսկե ձիկ

Պապի,	Ձւիկը:
Տատի	Ձւիկն ընկաւ
Չալ հաւիկ	Կոտրւեց:
Ածեց ոսկի	Հաց է լալիս
Մի ձւիկ:	Պապիկը,
Տուր որ տւեց	Հաց է լալիս
Պապիկը,	Տատիկը
Բայց չը ջարդեց	Ու կրուկը ուում
Ձւիկը:	Հաւիկը.
Տուր որ տւեց	- Մի լար, պապիկ,
Տատիկը,	Մի լար, տատիկ,
Բայց չը ջարդեց	Նորից կածեմ
Ձւիկը:	Ես մի ձւիկ,
—	Ձւիկ, ձւիկ,
Մին էլ վազեց	Ձւեղէն,
Մկնիկը,	Էլ չի լինի
Պոչահարեց	Ոսկեղէն:

59. Չուչիկը

Առաւօտը նոր էինք վեր կացել, ծառան յայտնեց, թէ գողերը մեր աքաղաղն ու հաւերը տարել են:

Վաղեցիներ տեսանք հաւանոցը դատարկ է:

Իսկուհի եկանք փողոց, դարպասի առաջ կանգնեցինք մեր փոքրիկ շան՝ Չուչիկի հետ: Յանկարծ Չուչիկը գետինը հոտոտեց, նայեց դէս ու դէն և վազեց: Մենք էլ ընկանք նրա յետևից: Չուչիկը կանգնեց մի դռան առաջ և բարձր-բարձր հաջեց: Մէկ էլ՝ դռան յետևից լրսւեցին մեր աքաղաղի ուրախ ծուղրուղուն և հաւերի կըշկըշոցը:

— Գտանք, գտանք, ուրախացանք մենք և կանչեցինք ծառային: Ծառան եկաւ, դուռը բացեց... Հաւերն ու աքաղաղը բանտից դուրս թռան: Չուչիկը պոչը դրօշակի պէս բարձր բռնած՝ հետևում էր նրանց:

Ինչո՞ւ են մարդիկ շուն պահում:
Էլ ի՞նչ զիտէք շների մասին:

Ա. ո. ա. ծ. — Շունն իր տիրոջ վրա չի հաջի:



60. Լուսին

Լուսինն ելաւ էն սարից,
սարի բարձր կատարից,
շէկլիկ-մէկլիկ երեսով
փռեց գետնին լուսի ծով. —

— Չան, այ լուսին,

շէկլիկ լուսին,

չան քո կյոր

շէկ երեսին:

Թաւարն իսկոյն չքացաւ
ու էլ գետնին չը կացաւ,
լուսնի լուսից հալածւած՝
խոր ձորերի մէջ մնաց. —

— Չան, ան, լուսին,

չան, քո լուսին,

չան քո արծաթ

կամար ուսին:

Ե՞րբ է լուսին լինում:

Հան ելուկ. — էն ինչն է՝ մեր կտերը մի կտորած տեփուր է ընկած:

61. Զիաւորներ

Շէկկիկ Իսակը, Բկկիկ Սիսակը ու Բոբիկ Միսակը ձի-ձի էին խաղում: Իսակը հեծել էր պապի ձեռնափայտը, Սիսակը մի թիուկով, իսկ Միսակը՝ մի երկար ձող:

— Ի, ի, հի, հի, հի... խրխնջում էր Իսակի քուռակը:

— Փը՛ռռռ, հը՛ռ, հը՛ռ, հը՛ռ... փռնչում էր Սիսակի ձին:

— Սը՛սսս, ձերմակ ջան, սը՛սսս... փաղաքշում էր Միսակն իր վազանին:



— Մէկ, երկու, երեք՝ հէնց որ նշան արաւ Կարճիկ Խաչիկը, ձիաւորները միասին ասին. —

Ով աղաք, աղաք՝
նա հասնի քաղաք.

ով յետի, յետի՝
նրա ձին փետի:

Ասին ու պոկ, քշեցին իրենց ձիաները... Ինչպէս էին վազում:

Էլ ինչ խաղեր գիտէք:

Հանելուկ. — Պատիկ աղան վազէվազ՝ մէջքի գօտին քառսուն գազ.



62. Անձրեւ

— Էհ, մայրիկ, անձրև է գալի, էլ ինչպէս գնանք գբօսներու:

— Սպասիր, բալիկս, էդ ոսկի է, ոսկի, երկէնքն է տալիս:

— Իսկի էլ ոսկի չէ... չենք կարողանում խաղալ, ինչի է պէտք.

— Ինչի է պէտք... կաց ասեմ, բալիկս, ասեմ, իմացի. —

— Հացը դաշտումը ծլել է,

ծաղկել, ցօղուն արձակել, անձրև է պէտք նրան, որ աճի:

Ծառերը ծաղկել, տերև են տուել, անձրև կուզեն, որ չը չորանան:

Սար ու ձոր կանաչել, խոտերն են աճել՝ անձրև է պէտք նրանց:

Առանց անձրևի ոչ ոք կեանք չունի, նա կեանք է նախշում, նա կեանք է բախշում:

Ա. ո. ա. ծ. — Վատ օրը կը լաւանայ, վատ մարդը չի լաւանայ:

63. Ինքնաբեր

— Արգրան, ինչպէս եղան, որ շունք ինչ կ'ընայ:

— Զեռփերս ապար, չէին:

— Ինչ կար շեռփիդ:

— մի շեռփիս ծիպոր, միս շեռփիս մարակ: Թէ

շեռփերս ապար կրչինէին, ես նրան կ'ընայ ցոյց

կրպայի, — հպարտացաւ երոս, Արգրանը:

Ի՞նչպիսի տղայ էր Տիգրանը:



64. Բիւրեղ

Բիւրեղ, Բիւրեղ, բուրաստան,
մի քոյր ունեմ Հնդստան,
շիւա շապիկ կարող է,
մանր ուլուկ շարող է:
Քոյրս գնաց բանջարի,
բանջար չեղաւ, խոտ եղաւ,
խոտի տակին ծիտ եղաւ:
Ծիտը թուաւ գերանին,
կանաչ խոտը բերանին...
Աւետարան ուխտ գնաց,
Բիւրեղի հետ ջուխտ գնաց:

Ի՞նչ քոյսեր գիտէք

Հ ա ն ե լ ու կ. — Երկու ախպէր ուխտ գնացին,
հէնց իմացայ ջուխտ գնացին:

65. Ծիտիկների կոիւր

I

—Ծիլի—վիլի,
 ծիլի-վիլի,
 ծիտիկները հիւր են եկել
 մեր պարտէզ,
 հիւր են եկել, հազար բարև
 բերել մեզ:

—Ծիլ-վիլի,
 ծիլի-վիլի,
 ծըլվըլում են, թըռվըռում են
 ծառից ծառ,
 թըռվըռում են, թռչկոտում
 են անդադար:

—Ծիւ—ծիւ,
 ծիւ—ծիւ...
 Ծիւկն ասաւ.—

—էս թառն իմն է,
 էս ծառն իմն է,
 ես եմ տնկել ինձ համար:
 —Չէ-չէ...
 Չիւիկն ասաւ.

—Ես եմ տնկել
 ու հիւր եկել,
 որ ըէֆ անեմ էս ամառ:
 —Ցեւ-ցեւ,
 ցեւ-ցեւ...
 Սևիկն ասաւ.—

—Գնա՛, կորի,
 էս սալորի
 տէրը ես եմ, դու սիվ ես:
 —Տեւ-տեւ,
 տեւ-տեւ,
 Թևիկն ասաւ,—

—Իսչ ես եկել,
 աչքդ տնկել
 փնթփնթում ըեզ ու ըեզ:

II

Ծիւիկն ասաւ,
 Չիւիկն ասաւ,
 մի կողմի էլ
 Սևիկն ասաւ.
 Թևիկն ասաւ...
 Ասին, ասին,
 խիստ բարկացան,
 իրար անցան:
 Մէջերն ընկաւ կոիւր,
 աշխարհ կալաւ ծիւ-ծիւր.
 մէկզմէկու գգեցին,
 ու իրար կողք բգեցին,
 ծառից իջան
 կտուրը,
 կտրից ընկան տան դուռը,
 փրուփրուացրին պոչ ու թև,
 մէկ տակ իջան, մէկ վերև:
 Ծիւ-ծիւ,
 ճիւ-ճիւ...
 ծըլվըլացին, թըռվըռացին,
 մէկ էլ յանկարծ
 ելան ձեռաց
 բաժանւեցին, գնացին:
 Ծիւիկն ելաւ սալորին՝
 խէթ-խէթ նայեց բոլորին.
 Չիւիկն ելաւ ծառի ճիւր
 դէս-դէն նայեց աներկիւղ.
 Իսկ Թևիկն ու Սևիկը
 թռան, տեղից վերացան՝
 մեր պարտիզից հեռացան:

Ո՛վ է տեսել ծիտիկների կոիւր:



66. Գառնուկ

Հայրս ինձ համար մի սև գառնուկ էր գնել: Գեղեցիկ էր
ա, գունչը սիրուն: Մի գոյգ փոքրիկ եղջիւր ունէր, ես ամեն
նրանց ճարպ էի քսում, որ փայլեն:

Ես այնքան սիրեցի այդ գառնուկին, որ գիշերները չէի ու-
ում բաժանել նրանից: Ամեն օր տանում էի արածացնելու:
նունը դրել էի Լէյլի: Նա վազում էր յետևիցս, լիզում էր ձեռ-
երս ու գունչը դնում ծնկներիս վրա, երեսիս նայում:

Շաբաթն երկու անգամ սապնով լողացնում էի նրան: Նրա
ղջիւրները մեծանում էին և կամաց կամաց ծոււում: Ես մտա-
ում էի թէ նա ինչպէս մի օր զոչ դարձած պիտի կուլի ուրիշ
ոչերի հետ ու յաղթի նրանց:

Ո՛վ է գառնուկ մեծացրել եւ ինչպէս:

Ա. ու ա ծ. — Ասածու պահած գառը գայլը չի ուտի:



67. Նապաստակը

Նապաստակը տեսաւ աղւէսին ու մին էլ էնպէս գունդ ու
ծիկ ճնց է փախչում, ճնց է փախչում... աղւէսն էլ նրա յետե-
ից ճնց է ձգել, ճնց է լարել:

Աղւէսը տեսաւ, որ նապաստակին հասնողը չէ, ձայն տւեց.


— Ա՛յ շղթիկ, այ մոխրիկ, լաւն էն է կանգնես, ինձ չը չար-
արես, միկնոյն է՛ կը հասնեմ քեզ:

— Ա՛յ ուստա աղւէս, — ասաւ նապաստակը, — հասնելդ ու չը
հասնելդ չը գիտեմ, բայց լսեմ ու կանգնեմ՝ բաց աչքով էդ չես
տեսնի:

Ի՞նչ արագավագ կենդանիներ գիտէք:

Ա. ու ա ծ. — Աղւէսի գունչը խաղողին չը հասաւ, ասաւ խակ է:

68. Փախարակ



Փրվրար, Փրվրար Փախարակ
ես հարս մանեմ, դու բարս
ես մեղր ուրեմ, դու կարսագ
շար մանողին շալ շապիկ,
քիչ մանողին ալ շապիկ:

Թելից ինչ են շինում:



69. Ճնճողուկն ու դեղձանիկները

—Միւ, ծիւ, ճիւ, ճիւ... ճնճողուկ էր, վանդակ չը տեսած
ճնճողուկ:

Կանգնել էր ձողի ծայրին ու նայում էր վանդակին: Երկու
թռչուն կային այնտեղ, դեղձանիկներ էին նրանք:

Ինչպէս կծկւել, կպել էին իրար... կերակուր էլ ունէին:

—Միւ, ծիւ, ծիւ, — ճնճողուկն եկաւ, նստեց վանդակի վրա:

— Իարև, ազնիւ թռչուններ, ինչո՞ւ էք կծկւել: Այդ ինչ լաւ
կերակուր ունէք...

Դեղձանիկները վեր նայեցին.

—Մենք կուշտ ենք, կուզես եկ, կեր:

—Շնորհակալ եմ, — ծիծաղեց ճնճողուկը, — երբէք չէի ցանկա
նայ վանդակը մտնել կտի համար:

1. Դեղձանիկներին ինչո՞ւ էին փակել վանդակում:

2. Ծնճողուկն ինչո՞ւ վանդակ չը մտաւ:

70. Հայրիկի պես

Կառապան Օհանը ամեն առաւօտ լծում էր կառքը և ձիա-
երին ասում.—

— Գնանք, Թռչնիկ ջան, գնանք, Բազիկ ջան, գնանք փող
աշխատենք, որ մեր Շողիկի, Գուրգէնի ու Կիկոսի համար հաց
տնենք, ձեզ համար էլ գարի:

Ասում էր ու բշում դէպի փողոց:

Ձիաները գլուխները թափահարում էին, փունչացնում ու
աղում:

Շողիկը, Գուրգէնն ու Կիկոսը՝ հայրիկի գնալուց յետոյ,
ուրս էին գալիս բակը ու կառք էին խաղում: Նրանց հետ էր
նստում իրենց փոքրիկ շունը՝ Յիբօն:



Գուրգէնը լծում էր կառքին՝ փոքրիկ Կիկոսի հետ, իսկ Շո-
ղիկը մտրակով բշում էր նրանց ու ասում հայրիկի պես:

— Գնանք, Թռչնիկ ջան, գնանք, Բազիկ ջան, գնանք փող աշ-
խատենք, որ մեր Շողիկի, Գուրգէնի ու Կիկոսի համար հաց
տնենք, ձեզ համար էլ գարի:

— Է՛, Շողիկ, կառապան չես, — ասում էր Գուրգէնը, — գնանք
փող աշխատենք, որ մեր հայրիկի ու մայրիկի համար միրգ տնենք:

— Ձէ, Շողիկ, չէ, Գուրգէն, — ասում էր փոքրիկ Կիկոսը, —
գնանք փող աշխատենք, որ մեր Յիբօի համար միս տնենք:

Ո՞ր երեխայի ուզածն էր լալը:

71. Մեր Սեռուկը

Մեր սև կատուին ճանաչում էր ամբողջ թաղը: Կատուները
 շատ կային մեր թաղում, բայց մեր Սևուկը մի հատ էր: Սև, բո-
 լորովին սև, աչքերը դեղին, մազը թափշ, պսպղուն, ինքը սի-
 րուն ու կլորիկ...

Երեկոյեան, երբ հայրս ծալապատիկ նստում էր ու կար ա-
 նում, Սևուկը կամաց-կամաց մօտենում էր նրան և բարակ
 ցած ձայնով մլաւում:

—Մարիամ. հաց բեր, Սևուկը քաղցած է—ասում էր հայրս:
 Սփռոցը բացւում էր, մենք նստում էինք նրա շուրջը, Սե-
 ւուկն էլ նստում էր հօրս ծնկանը:

—Ուտենք, կատու, Աստծու տւածը,—ասում էր հայրս:

Ինչո՞ւ էին սիրում Սևուկին:



72. Արև

Արև, արև, արեգակ,
 աշխարհն առած թևիդ տակ
 ամբողջ տարին երկնքում
 ման ես գալիս շարունակ:



73. Միրուն թռչուններ...

Միրուն թռչուններ,
 Ինձնից մի վախէք,
 Նստեցէք ծառին՝
 Անուշ գեղգեղէք:

Թակարդ չեմ դնի
 Դաշտում, պարտիզում,
 Ազատ ապրեցէք,
 Ձեր երգն եմ ուզում:

Ո՞վքեր են թակարդով թռչուններ որսում եւ ինչո՞ւ:
 Հանելուկ.—Մի կտոր փայտ ունեմ՝ սղոց չի տեսել,
 Մի տոպրակ ալիւր ունեմ՝ ջաղաց չի տեսել:
 Մի արշին ատլաս ունեմ՝ գործող չի տեսել:

74. Երբ է լինում



Դաշտը մերկանում,
օրը կարճանում,
խամին է խաղում,
անշրևը մաղում:

Այդ երբ է լինում:

Հանելուկ.— Չորս եղբայր մի գլխարկ ունեն:




75. Մրամիտ Եւան

- Հայրիկ, տասը, մատդ էնպէս համարիր, որ տասներմէկ լինի, — ասաւ Եւան:
- Տասներմէկ: Էս ըոպէիս.— մէկ, երկու, երեք: Չորս, հինգ, վեց, եօթ, ութ: Տասը, տասներմէկ:
- Չեղաւ, չեղաւ, հայրիկ, իննը թողիր, նկատեց Եւան:
- Ապա ի՞նչպէս, Եւա:
- Ա՛յ ասեմ.— մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, ութ, իննը, տասը: Տասն էր, չէ՞:
- Այո՛, բայց ոչ տասներմէկը:
- Սպասիր է, ասեմ. հիմա յետ համարենք.— տասը, իննը, ութ, եօթ, վեց: Էս վեց, հայրիկ, էս ձեռքս էլ հինգ մատ ունի, վեցին աւելացնենք հինգ՝ կը լինի տասներմէկ: Եղա՛ւ, հայրիկ, — ասաւ Եւան ու ծիծաղելով դուրս վազեց:

Դուք ի՞նչ գիտէք այս խաղի նման:

Ա. ո. ա. ծ.— Պատիկ է ու չստիկ է:



76.

Շաւարշը վարպետ

Շաւարշը դերձակի աշակերտ էր: Երեք տարուց յետոյ հայրը եկաւ քաղաք՝ որդուն տեսնելու:

— Ի՞նչ ես սովորել, այ որդի, — հարցրեց հայրը:

— Օ, հայրիկ, էլ մի հարցնի, արհեստի կէսը սովորել եմ, արդէն գիտեմ ասեղը թելել, մտում է, որ կարելը սովորեմ, — պատասխանեց Շաւարշը:

— Ձէ, Շաւարշ, էլ չեմ կարող սպասել, ես մեղք եմ, օգնական չունեմ, արի տանեմ կօշկակարի տամ, կօշիկ կարել սովորի:

Միւս օրը Շաւարշը կօշկակարի աշակերտ էր:

Նա ուշադրութեամբ հետևում էր վարպետի բոլոր գործերին և տեսնում էր, որ միշտ միևնոյն բանն է անում նա:

Մի շաբաթից յետոյ Շաւարշն ասաւ հօրը:

— Հայրիկ, ես արդէն վարպետ եմ, արդէն գիտեմ կօշիկ կարելու համար ի՞նչ պէտք է իմանալ. — Պէտք է ոտքի շափար առնել, կաշին թրջել, կաղապարի վրա քաշել, բզով ծակել, մեխ խփել և կօշիկը արդէն պատրաստ է...

— Ապրես, Շաւարշ ջան, ի՞նչ լաւ բան է, ինձ էլ սովորեցրի՛րքո վարպետութիւնը, — ասաւ հայրը:

Ի՞նչպէս տղայ էր Շաւարշը:

77. Ծիտիկն ու մուկիկը

Ծիտիկն ու մուկիկը ախպէրացան: Գետի ափին բուն շինեցին, մտան մէջը:

Մի օր ծիտը գնաց քուշուշ անելու, յետ եկաւ, տեսաւ մուկիկը մեռել է: Ծականը զարկեց, եօթը ճամբի մէջտեղը նստեց հողը փորեց, տւաւ գլխին ու ասաւ,

— Վայ, ախպէր ջան, վայ:

Ձէնի վրա լորիկն եկաւ.

— Ծիտիկ-միտիկ, չալ-փետուրիկ, հողն ինչո՞ւ ես տալիս գլխիդ:

— Թա՛ն, թա՛ն, ասաւ ծիտը, —

ես որ չը տամ, ո՞վ տայ հապա:

Մուկիկի պէս ախպէր մեռաւ,

աշխարհքն էսպէս մնաց անտէր,

ես որ հողը տամ իմ գլխին

մե՞ծ բան է...

Հանելուկ. — Էն ի՞նչն է — չորս ոտը հողին, երկուսը կողին:



78. Փայտփորը*)

Ահա եղևնին
և վրան փայտփոր:
Նա անկոչ հիւր է,
ծառին ամեն օր
տոցով է տալիս,



պտոյտ է գալիս:
Մի բեխլի բզէզ,
կամ մի բան էսպէս՝
կտցին է գալիս,
բկին է տալիս:

Փայտփորը ինչպիսի թռչուն է:

*) Ծառածակի-ծառակուտիկուտ:

79. Անքեր

Եղևած քերև է. ծառիցն է ընկել, քամին
լուկել, ուրի քակ չգել:

Անչիք վերևն է թև լուսի թույլ, իր ծառին
պչի, ուրի քակ ընկած անհետք պիտ կորչի:

Ծ՞րբ են դեղնում տերեւները:

Ա. Ա. Ս. — Ծառի տերևը իր տակը կը կաթի:



80. Քաղցածը

— Վայ, քոռանայ Սահակի մէրը, կերաւ մի դաստա հաց,
մի եզան գլուխ, մի մաթրաթ մածուն, քաղցած գնաց նախիրը...
Վայ, ջանս դուրս գայ քեզ համար, Սահակ ջան...



81. Աշխատանք

— Մենք, երեխէք, օրերով, մէջքով աղիւս կրեցինք. մեր կոշ-
տացած ձեռքերով պատ ու պատնէշ շարեցինք:

— Մենք էլ կացնով, երեխէք, ձող ու գերան կտրեցինք ու ձեզ
համար ապահով խրճիթ ու տուն շինեցինք:

— Մենք էլ դաշտը արօրով ակօս-ակօս վարեցինք, ոսկի ցորեն
ու գարի բուռը-բուռը ցանեցինք:

— Եկէք դուք էլ, երեխէք, աշխատանքը սիրեցէք, ու ճակատի
քրտինքով ձեր ապրուստը ճարեցէք:

Ա. Ա. Ս. — Ով կաշխատի՝ նա կուտի:



82. Որբ գոճիները

Յուրտ էր: Ճուխին, Տուխին ու Պնչօն, որբ գոճիները, պառ-
ել էին կողք-կողքի տւած ու քնել:

—Վախ, վախ, վախ... էս ի՞նչ ցուրտ է,—զարթնեց Ճուխին,
կաւ մտաւ Տուխինի ու Պնչօի արանքը, տաքացաւ ու քնեց:

—Վախ, վախ, վախ... էս ի՞նչ ցուրտ է,—զարթնեց Տուխին,
կաւ մտաւ Ճուխինի ու Պնչօի արանքը, տաքացաւ ու քնեց:

—Վախ, վախ, վախ... էս ի՞նչ ցուրտ է,—զարթնեց Պնչօն,
քնաց մտաւ Ճուխինի ու Տուխինի արանքը, տաքացաւ ու քնեց:

Եւ այսպէս խեղճ գոճիները ցրտից հանգիստ քուն չունէին.
չարթնում էին շարունակ մէկ-մէկու արանքը մտնում:

Տանտէրը տեսաւ, խղճաց և ծածկեց նրանց:

Գոճիները տաքացան ու մուշ-մուշ քնեցին:

Ի՞նչ օգոտ են տալիս խոզերը:

Հ ա ն ե լ ու կ. -- Պապս պառկել է, քառասուն կարպետը վրան.

էլի ասում է՝ մըսում եմ:



83. Խ ո զ ը

—Խոզուկ, սրտեղ էիր:

—Մանուկ աղէնց բակում:

—Ի՞նչ կար, ի՞նչ չը կար:

—Էհ, նա էլ մի տեղ չէր. ոչ կարգ կար, ոչ կանոն: Ամեն
ինչ մաքուր, իստակ, իւղ թափէիր՝ կը հաւաքւէր: Մինչև ան-
գամ՝ աղբանոց էլ չը կար, քանդւի էնպէս բակը... Ա՛յ ինչ եմ
ասել կարմուրջի տակը...

Խոզին ինչո՞ւ Մանուկ աղենց բակը դուր չեկաւ:

Ինչո՞ւ է դուր գալիս կամուրջի տակը:

Ա. ու տ ծ. -- Էշն ինչ գիտէ նուշն ինչ է:

Աղբար կախա էր բռնել. յանկարծ փնասա մի
 մուկ. զաժ գրեց կախար ու ընկա մկան ետևից :
 կախար թուա, մուկը մտա իր բուռը : Աղբ-
 ար մնաց բերանը բաց .

Աղետն ինչպիսի կենդանի է :

Ա. ա. ծ. — Գայլի անունն է ելել, աղետն աշխարհ քանդեց :



85. Քեզ էլ չի մնայ...

ա.

Լինում է չի լինում մի Խաթուն-Կատու է լինում և մի
 էծիկ-Պէծիկ է լինում : Մի օր սրանք փախչում են տանից ու
 անտառում պատահում են Արջիկ-Կարճիկին :

— Խաթուն-Կատու, էծիկ-Պէծիկ, ուր էք գնում, — հարցնում
 է Արջիկ-Կարճիկը :

— Պապի, մենք գնում ենք աշխարհ տեսնելու, չե՞ս գայ մեզ
 հետ, — վախվախելով պատասխանում են Խաթուն-Կատուն ու էծիկ-
 Պէծիկը :

Արջիկ-Կարճիկը մտածում է, մտածում ու ասում. —

— Գը գամ, չը գամ ի՞նչ անեմ, անտառի խորքում թաթս լի-
 զելով հոգիս դուրս եկաւ : Գայլը՝ դամ... բայց ի՞նչպէս ապրենք :

— Ի՞նչ էլ բան ես ասում, Արջիկ-Պապիկ, քաղաքից քաղաք
 ման կը գանք, փողոցները կը շրջենք ու մարդկանց կուրախաց-
 նենք :

— Ի՞նչպէս կուրախացնենք, — հարցնում է Արջիկ-Կարճիկը :

— Արջիկ-Պապիկ, դու սազ կածես, Խաթուն-Կատուն դափ
 կը խփի, ես էլ պար կը գամ, — պատասխանում է էծիկ-Պէծիկը,

— էհ, յաւ էք ասում, գնանք, մարդկանց ուրախացնենք, —
 ասում է Արջիկ-Կարճիկը :

Ու երեքով ճամփա են ընկնում գնում :

Գնում են, գնում, հասնում մի քաղաք: Արջի համար մի սազ են առնում, կատուի համար մի դափ, գայլիս են ու քաղաքի հրապարակում կանգնում: Արջիկ-Կարճիկը սազն է լարում, Խաթուն-Կատուն դափը զլում, ձէն-ձէնի են տալիս, նւագում են ու երգում:—

—Օրնգրլ-մընգրլ, սազ կածենք, | Դէ ծափ տւէք, ծափ տո՛ւ դու,
Դիփալի-դաւուր, դափ կածենք, | Մեր էծիկին պար կածենք...

էծիկ-Պէծիկը կանգնում է յետի ոտների վրա, վիզը տնկում է, միրուքը ցցում, շորոր-մորոր պար է գայլիս, լեզւին է տալիս, մկմկում, ոտին է տալիս՝ տնկտնկում, ծուլի-ծուլի վեր թռչում, երկու թաթը դէմ անում, որին հասնում էսպէս ասում:—

—Արջիկ պապին տանձ տւէք, | Երգիչներիս հաց տւէք,
Խաթուն-կատուին գանձ տւէք, | ձեր շնորհքը շանց տւէք...

Մարդիկ ծիծաղից թուլանում են, որը տանձ է տալիս, որը գանձ՝ մի կոպէկ, երկու կոպէկ.., էսպէս նրանք շրջում են փողոցէ փողոց, բակից բակ: Ուրախ էին և կուշտ, գրպաններումն էլ փող ունէին: Արջիկ-Կարճիկը դառնում է նրանց գանձապահը:

Անցնում է մի առ ժամանակ: Արջը տեսնում է, որ շատ փող է հաւաքւել, միտքը փոխում է:—Էլ ի՞նչ բաժին տամ ընկերներին, ասում է ինքն իրան, էս փողով հազիւ ես կապրեմ, նրանք փողն ի՞նչ են անում: Ու մի օր էլ ասում է ընկերներին:—

—Ես ման գալուց յոգնեցի, ինձ հանգիստ թողէք, գնացէք ձեր բանին...

—Դէ փողը բեր կիսենք,—ասում են ընկերները:

—Ի՞նչ փող,—գայրանում է արջը ու ատամները ցոյց տալիս...

—Ամօթ քեզ, Արջիկ-Կարճիկ, համ տանձը կերար, համ գանձը... Էդ փողը քեզ էլ չի մնայ,—ասում են ու փախչում: Խաթուն-Կատուն գնում է տուն՝ մուկ որսալու, էծիկ-Պէծիկը՝ դաշտ՝ արածելու:

Արջն էս փողերով քէֆ է անում մի օր, երկու օր, մէկ էլ տեսնում է, որ էլ փող չը կայ: Նա էլ գնում է անտառը, կողքի վրա ընկնում ու նորից թաթը լիզում: Իր արած վատութիւնը մնում է իրան:

Ինչո՞ւ երկար չը տեսց սոսնց ընկերութիւնը:

87. Խորամանկ աղւեսը

Լինում է չի լինում մի աղւես: Մի օր էս աղւեսը տեսնում է, որ գետի ափին մի հարս լացք է անում: Մածուկ մօտենում է, որ նրա պաշարը գողանայ, տանի անուշ անի: Մօտենում է, հարսի կապոցը գողանում է ու փախչում:

Գնում է. մի ծառի տակ կապոցը բաց է անում և ինչ տեսնի, փայլուն ոսկիներ... Աղւեսը ուրախանում է, ոսկիները կապում է պոչին, վեր է թռչում, պոչն է պաշում ու խաղ կանչում.—

—Աման, աման, այ աման,
 ով կայ, ով կայ ինձ նման,
 տեսէք, տեսէք ինչ արի,
 ես գնացի պաշարի,

ոսկի գտայ ու բերի
 իմ պոչիցը քաշ արի:
 Իէ, պոչիկ ջան, զնգզնգայ
 թող հարսն էնտեղ թնգթնգայ...

Աղւեսն էսպէս առաջ, ետ, խաղ է անում պոչի հետ: Մէկ էլ մի գայլ մտքի հետ, կուճին անմազ, վիզը փէտ, գալիս է ու ասում.—

Այ աղւես, ով է տւել ոսկին քեզ: Աղւեսը պատասխանում է.—

—Գէլիկ-փէլիկ, գէլ բիձա,
 լիճը տւեց ինձ ընծայ:
 Կուզես, գնանք, գէլ բիձա,
 ասեմ, քեզ էլ ընծայ տայ...

Գայլն ասում է. —
 —Որ էդպէս է,
 այ աղւես,
 հեծի վրէս, տանեմ քեզ:

Խորամանկ աղւեսը հեծնում է գայլին, ու քշում դէպի լիճը: Ճամփին խրատում է թէ՛ պոչդ կը դնես ջրի մէջ, մինչև առաւօտ կըսպասես, ես կը գամ, պոչդ կը հանենք ջրից ոսկիներով զարդարւած:

Այսպէս հեծած գայլ բիձին՝ գալիս հասնում են լճին: Գայլը կըկզում է ջրում ու պոչը ջրի մէջ դնում, Աղւեսը թողնում է, գնում:

Մի ցուրտ օր էր յունւարի,
 գիշերն եղաւ մի տարի...
 Շուրր սառեց, հուպ եկաւ,
 գայլի պոչը պինդ կպաւ...
 Երկինք, գետինք ճկճկաց,
 գայլը ցրտից վնգվնգաց:
 Տեսաւ ինքը կը սառչի,
 պոչը քաշեց, որ փախչի...
 քայց ուրտեղից... էն լճից...

լիճը կպել էր պոչից:
 Օրը բացւեց, լուսացաւ,
 ուստէն քնից վեր կացաւ,
 եկաւ, ասաւ գայլ-բիձին,
 որ կպել էր սառուցին. —
 —Իէ, կոնծկոնծա, կոնծկոնծա,
 խելքի պուտուկ, գէլ բիձա,
 ով է լսել իր օրում,
 ոսկի ման գան ջրերում...

87. Աթօն ու Թաթօն

Աղքատ է Աթօն, աղքատ է Թաթօն:

Աթօն ունի մի տուն երեխէք, Թաթօն ունի մի տուն երեխէք:

Կաթն են ուզում Աթօի տանը, կաթն են ուզում Թաթօի տանը:

Կաթն են ուզում՝ կաթ չի տալիս Աթօի՝ կովը. կաթն են ուզում՝ կաթ չի տալիս Թաթօի կովը:

— Ինչո՞ւ կաթ չեն տալիս կովերը:

— Կեր չեն ուտում:

— Ինչո՞ւ կեր չեն ուտում:

— Խոտ չը կայ:

Լալիս է Աթօն, լալիս է Թաթօն:

Լալիս է Աթօն ու ասում.—

— Լա՛ւ, որ գնամ խոտ հնձեմ, բա ինչո՞վ բերեմ.

սայլ չունեմ, ձի չունեմ, մենակ մի հաւ՝ ունեմ:

Լալիս է Թաթօն ու ասում.

— Լա՛ւ, որ գնամ խոտ հնձեմ, բա ինչո՞վ բերեմ, սայլ չունեմ, ձի չունեմ, մենակ մի կատու ունեմ:

— Է՛, ինչ ուզորմ է լինի,— ասում է Ա-

թօն,— լծեմ հաւս՝ գնամ խոտի, խոտը բերեմ՝

կովս ուտի: Լծեց հաւը, գնաց խոտի, որ խոտ բերի կովը ուտի:

— Է՛հ, ինչ ուզում է լինի, ասում է Թա-

թօն, լծեմ կատուս՝ գնամ խոտի, խոտը բե-

րեմ՝ կովս ուտի: Լծեց կատուն, գնաց խոտի, որ խոտ բերի, կովը ուտի:

Գնում է Աթօն՝ շր՛խկ-թը՛խկ...

Գնում է Թաթօն՝ շր՛խկ-թը՛խկ...

— Ո՛ւր ես գնում, Աթօ,— հարցնում է Թաթօն.

— Խոտի...

— Ինչի՞ դ է պէտք խոտը:

— Կովս ուտի...

— Ինչի՞ դ է պէտք կովը:

— Կաթը տայ:

— Ինչի՞ դ է պէտք կաթը:

— Երեխէքս ուտեն:

— Է՛հ, հաւով ինչքան խոտ ես բերելու, Աթօ:

— Ինչքան բերի-բերի, Թաթօ:

— Ես էլ եմ գալիս խոտի:



Գնում է Աթօն՝ շր՛խկ-թը՛խկ...

Գնում է Թաթօն՝ շր՛խկ-թը՛խկ...

Գնում են, գնում, հասնում
խոտատեղ: Խոտը հնձում են,
հաւաքում, դէզ են դնում ու
քիչ-քիչ կրում են տուն Աթօն
իր հաւով, Թաթօն իր կատուով:
Կրում են ու տալիս իրենց կո-
վերին:



Որ տալիս են փաթիլ-փաթիլ, կաթն են կթում կաթիլ-կաթիլ...
Որ տալիս են խտիտ-խտիտ՝ կաթն են կթում կովկիթ-կովկիթ...

Ի՞նչպիսի մարդիկ էին Աթօն ու Թաթօն:

Ա. ռ. ա. ծ. — Գլորւեց խուփը, գտաւ պուտուկը:



88. Զորս եղանակ

Թէ գարուն է նաշ-նաշխուն,
նա ինչե՞ր է մեզ բաշխում:

Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,
ալ ու ալւան վարդ շաղոտ:

Թէ ամառ է, շոգ ամառ,
ի՞նչ է բերում մեզ համար:

Ցորեն, գարի ու հաճար,
ամեն հոգսի դեղ ու ճար:

Թէ աշուն է պտղաբեր,
ի՞նչ է բերում մեզ նւէր:

— Նուռ, սերկնիլ, տանձ, խնձոր,
դեղձ ու խաղող մեղրածոր:

Թէ ձմեռ է ցրտաշունչ,
ի՞նչ է թափում լուռ ու մունջ:

Փաթիլ, փաթիլ փափուկ ձիւն՝ —
արծաթի պէս պսպղուն:

1. Տարին քանի եղանակ, քանի ամիս ունի:

2. Ո՞ր եղանակն ու ի՞ր ամիսն է ձեզ դուր գալիս:

Ա. ռ. ա. ծ. — Կը գայ տարին՝ հետը բարին:



I.

Ձեռագիր այբբենարան 3—28
 Տպագիր վարժութիւններ 29—38
 Այբուբեն 39
 Մեծատառ այբուբեն 40

II. Ձ Մ Ե Ռ

	Երես		Երես
1. *Մեր դպրոցը (ոտ.)	41	12. *Անուշ մայրիկը	46
2. *Կաշաղակը	»	13. Ծիտ (Աղ...)	»
3. *Արշալոյսը (ոտ.)	»	14. Ռէր գնամ (ժողովրդ.)	»
4. *Բարի Նազիկը	42	15. Տիկնի պսակ (մանկ. խաղ)	47
5. *Առաւօտ (ոտ.)	»	16. *Ե՛ս... (առակ)	48
6. *Ձմեռ	»	17. Ի՞նչ եմ ուզում (ոտ.) Աշակերտ	49
7. Ե՞րբ է լինում (ոտ.)	43	18. *Մուկիկը (ոտ.)	»
8. *Վահանի ձիերը	»	19. *Մկան պալատիկը. հէքիաթ	50
9. *Մարգոն	44	20. *Արփիկը	52
10. *Ձմեռ	»	21. Հովանոցի տակ	»
11. *Տատմէր աղէսը (ոտ.)	45		

III. ԳԱՐՈՒՆ

22. Գարնանը (ոտ.) Յով. Թում.	53	34. *Ի՞նչն է լաւը	57
23. *Ձագուկները	»	35. *Վարսիկի կատուները	58
24. Ծիտիկի օրօրը	»	36. *Կատու (ոտ.)	»
25. *Երբ է լինում (ոտ.)	54	37. Կուկուլիկուկ (ժող.)	»
26. *Արագիւններ	»	38. Սեւ կատուն. Լէօ.	59
27. Լագ-լագօ (ժող.) Գ. Սրլանձտ.	55	39. *Բոյր ու եղբայր (ոտ.)	»
28. *Մեղուն ու թիթեռը	»	40. *Մժեղ	60
29. *Մեղու (ոտ.)	»	41. *Ծաղիկներ (ոտ.)	»
30. *Նապաստակներ. Պ. Պոօշեան.	56	42. *Պոչատ հաւը (ժող.)	»
31. *Փնջիկ կովը (ոտ.)	»	43. Ծտի հարսնիք (ոտան.) Դ. Դեմիրճեան	61
32. Ժոյն ու ջուրը	57	44. *Էն ո՞վ է (ժող.)	»
33. *Մայիս (ոտ.)	»		

IV. Ա Մ Ա Ռ

5. Ե՞րբ է լինում (ոտ.)	62	48. *Ժիտիկ (ոտ.)	63
6. *Նանի հաւերը	»	49. Անբան Հուռին (ժող.) Յ. Թում.	64
7. *Սուլթան աքլորը	63	50. *Ո՛չ ոք (ժող.)	»

անօթ.—1) Աստղանիշ յօդաձևներն ու ստանաւորները խմբագրել և կամ փոխադրել են գիրք կազմողները: 2) Շաղատառ վերնագիր կրող յօդաձևները ձեռագիր են՝ արտագրութեան համար:

51. Փիսիկի գանգատը (ոտ.) Յ. Թ. 65
 52. *Փեսի բաժինը (ոտ.) 66
 53. Միծեանակ. Դողդիսեանի . . . »
 54. Զուխտ ու կենտ (Հաս.) . . . »
 55. Գնած են. Սիմակի 67
 56. *Մեր վառիկը (ոտ.) »
 57. Մայրը 68
 58. *Ոսկի ձկիկ »
 59. Զուչիկը Ա. Իսահակեանի . . . 69
 60. *Լուսին (ոտ.) »
 61. *Զիաւորներ 70
 62. *Անձրե »

63. *Հերոսը 63
 64. *Բիւրեղ 64
 65. *Միտիկների կռիւը 65
 66. Գառնոնկ. Շիրվանզադէի . . . 66
 67. *Նապաստակը 67
 68. Ճախարակ (ոտ.) Յար. Թուս. 68
 69. Ճանդուկն ու դեղձանիկը
 վ. Փափազեանի 69
 70. *Հայրիկի պէս 75
 71. Մեր սևուկը. Լէօ 76
 72. *Արե »
 73. Սիրուն թռչուններ »

V. Ա Շ Ո Ւ Ն

74. *Ծրը է լինում 77
 75. Սրամիտ Եւան. Նար-Դոս . . . »
 76. Շաւարշը վարպետ 78
 77. Միտիկն ու մուկիկը Յ. Թուս. 79
 78. *Փայտփորը (ոտ.) »
 79. *Տերել 80
 80. *Բաղցածը (ժող.) »
 81. *Աշխատանք »


82. *Որք գոճիներ 81
 83. *Խողը »
 84. *Ազահ աղւէսը 82
 85. *Բեղ էլ չի մնայ (հէքիաթ) . . . »
 86. *Խորամանկ աղւէսը (հէքիաթ) 84
 87. *Աթօն ու Թաթօն (հէքիաթ) 85
 88. *Զորս եղանակ (ոտ.) 86

VI. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ


1. Մեղրահաց 34
 2. Տիսիլ (տկողին) 35
 3. Դողում »
 4. Մուկն ու իր բունը 42
 5. Մաղ »
 6. Գլխարկը 44
 7. Գզալ 46
 8. Գուլպայ գործելու ձողեր . . . »
 9. Մուխ 52
 10. Վազող ջուրը 53
 11. Չկնորս ու ձուկ »

12. Մուխն ու կրակը 54
 13. Զուբ 59
 14. Զու 67
 15. Լուսին 69
 16. Ճախարակի վիլան 70
 17. Մկրատ 71
 18. Փշատ 76
 19. Սեղան 77
 20. Զի ու ձիաւոր 79
 21. Կաղամբ 81


Մ. Ա. ՄԱՐԻՍՅԱՆ—Ներսիսեան դպրոցում, 1915—16 ուս. թւին տեղի ունեցած Թիֆ. ծխ. դպրոց-
 շրջանի հայոց լեզու աւանդող ուսուցիչ-ուսուցչուհիների ժողովներում ընդունած դասագրք-
 քերին վերաբերող որոշումների համեմատ՝ աշխատել ենք բարեփոխել գրքիս երբորդ ապա-
 գիւրքիսն կա՛ ի միջի այլոց և հետեւել կերպով.—նախ՝ այս ապագրութիւնից հասել ենք
 անձ յանձնները, որոնք նկատել ենք մանուկների համար անհատաբարքի ու անարժէք և քո-
 ջորէնք տեղ ենք աւել աւելի իմաստալից յօդածնների՝ Հովանոցի տակ, Շաւարշը վարպետ,
 Միտիկների կռիւը և այլն. երկրորդ՝ տեղ աւելով մանկական ստանաւորներին աւելացրել
 ենք դաս. մանկական խողեր կա՛ Տիկնի պսակ, Զուխտ ու կէնտ, Հայրիկի պէս և այլն և
 երրորդ՝ աւելի կանոնաւորելով յօդածնների ներքին դասաւորութիւնը՝ ծանօթից անծանօթ,
 մտնելից հետոն՝ հարստացրել ենք երկու նոր հէքիաթով՝ Բեղ էլ չի մնայ, Խորամանկ աղ-
 լւէսը Այս ամենի համար դասագրքի աւելացրել ենք 8 նոր էջ:



ՍՏՈՒՑԱԿ 1917



[2n-]



A $\frac{II}{66771}$

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220066771